



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ՀՈՒԼԿՈՒՄԻ Ս.  
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, 21 Փետրուարը Մեծ Պահոց 2-րդ Կիրակին է, որ կը կոչուի՝ Արտաքսման Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հովիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի վախճանեալ Տ. Անուշաւան Ա. Զինյ. Արթինեանի քառասունքին առիթով:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT  
ST. GARABED CHURCH**

Sunday, February 21<sup>st</sup>, 2010, is the second Sunday of Great Lent, also known as Sunday of the Expulsion.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

Following Divine Liturgy the Prelate will preside over the 40<sup>th</sup> day requiem service for Archpriest Fr. Anoushavan Artinian.

\*\*\*

**ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ  
ՄԵԾ ՊԱՅՈՑ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ**

Չորեքշաբթի, 24 Փետրուարին, կ.ա. ժամը 10-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան:

Արարողութենէն ետք, Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, տեղի պիտի ունենայ

Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Օժանդակ Մարմինին կազմակերպած Մեծ Պահքի ճաշկերոյթը:

Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր. պիտի հրամցուին Պահքի յատուկ ճաշեր:

## LADIES AUXILIARY GREAT LENT LUNCHEON

On Wednesday, February 24<sup>th</sup>, the Prelate will preside over Sunrise Service at St. Mary's Church in Glendale.

The service will be followed by the annual Great Lent luncheon organized by the Prelacy Ladies Auxiliary under the auspices of the Prelate. The Prelate will attend the luncheon, which will be held at the adjoining "Armenak Der Bedrossian" Hall.

A cultural program will also take place.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՆԱՅՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԵՋ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵՑ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԱՌԱՋԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ



Չորեքշաբթի, 17  
Փետրուարին, Առաջնորդ  
Սրբազան Հայրը հանդիսապետեց  
Էնսիւնյի Սրբոց Նահատակաց  
Եկեղեցւոյ Արեւագալի առաջին  
արարողութեան: Ժամերգութեան  
ներկայ եղան Ֆերահեան Ազգ.  
Վարժարանի աշակերտները:  
Առաջնորդ Սրբազանը  
աշակերտներուն խօսեցաւ մեծ  
պահոց մասին:

Արարողութենէն ետք,  
Եկեղեցւոյ կից «Տիգրանեան»  
սրահին մէջ, տեղի ունեցաւ

Էնսիւնյի ՀՕՄ-ի «Անահիտ» Մասնաճիւղի Մեծ Պահքի ճաշկերոյթը:  
Առաջնորդ Սրբազան Հայրը հանդիսապետեց ճաշկերոյթին եւ փոխանցեց  
իր օրհնութեան խօսքը:

Մեծ Պահոց շրջանին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի  
կ'ունենան Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններ, Չորեքշաբթի եւ  
Ուրբաթ օրերուն:

Մանրամասնութիւններու համար կարելի է հեռաձայնել մեր  
եկեղեցիները կամ այցելել Ազգ. Առաջնորդարանի կայքէջը:

## PRELATE PRESIDES OVER FIRST SUNRISE SERVICE AT HOLY MARTYRS CHURCH

On Wednesday, February 17<sup>th</sup>, the Prelate presided over the first Sunrise Service of Great Lent at Holy Martyrs Church in Encino, and delivered his message on Great Lent to the faithful in attendance, among them students of Ferrahian High School.

Following the service the Prelate presided over the Lent luncheon organized by the ARS Anahid Chapter at the adjacent "Dikranian" Hall, and conveyed his blessings to the guests.

During Lent, Sunrise and Vesper services are offered in all Prelacy churches. Call your local church or visit the Prelacy website for a schedule of services.

\*\*\*

### ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐՂՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԻՊՈՒՄ



Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 16 Փետրուարին Ղրպտիներու Ս. Մարիամ եւ Ս. Աթանաս եկեղեցոյ մէջ ունեցան իրենց հերթական հանդիպումը, հիւրընկալութեամբ Ղրպտի Ուղղափառ եկեղեցոյ Առաջնորդ Սրապիոն Եպիսկոպոսին:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչները՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Միացեալ աղօթքէ ետք, ժողովը զեկուցումներ լսեց Կիրակնօրեայ դպրոցներու եւ երիտասարդական խմբակներու համատեղ գործունէութեան ու ծրագիրներուն մասին, ապա մշակեց յառաջիկայ ձեռնարկներու ծրագիրը:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական խմբակներու գործունէութեան:

## PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

The Council of Oriental Orthodox Bishops, comprised of the spiritual leaders of the Coptic, Syriac, and Armenian Orthodox Churches, held their regular meeting on Tuesday, February 16<sup>th</sup>, at St. Mary and St. Athanasius Coptic Orthodox Church in Northridge.

The meeting began with joint prayer conducted by the three spiritual leaders, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Church), H.G. Bishop Serapion (Coptic Church), and with the participation of clergy from the three churches. Very Rev. Fathers Muron Aznikian and Barhev Gulumian also participated in the meeting.

Items on the agenda included a report on Sunday School and youth group activities, and the drafting of future joint activities.

\*\*\*

## ԱՁԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ՏՕՆԵՑ ՏՈՂՄԻԿ ԵՒ ԽԱՆԴԱՎԱՌ ՄԹՆՈՒՈՐՏԻ ՄԷՋ

Արեւմտեան մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Բուն Բարեկենդանի տօնին առիթով կազմակերպուած էր իրախճանական ձեռնարկ մը, Կիրակի, 14 Փետրուար 2010ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ նախաձեռնութեամբ Ազգ. Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին եւ Ծնողական Յանձնախումբին: Մասնակից եղան աւելի քան 300 հանդիսականներ:



Հանդիսավար Տիկին Անի Մարապեանի բարի գալուստի խօսքէն ետք, միասնաբար երգուեցաւ Տէրունական աղօթքը՝ «Հայր Մեր»ը: Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներ երգեցին Կիրակնօրեայ դպրոցներու քայլերգը եւ կատարեցին Կիրակնօրեայ դպրոցներու «աշակերտական ուխտ»ը: Առաջնորդութեամբ ուսուցիչներու, կիրակնօրեայ դպրոցներու աշակերտական կազմեր հանդես եկան Բարեկենդանի տօնին

նուիրուած երգերով, արտասանութեամբ եւ թատերական ներկայացումով: Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինին անունով բարի գալուստի

խօսք արտասանեց Գերպ. Տ. Միւռն Ճ. Կրդ. Ազնիկեան, եւ հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի ուղղէ իր պատգամը: Առաջնորդ Սրբազանը գնահատեց տարուած աշխատանքն ու ներկայութիւնը հոգաբարձական, երեսփոխանական կազմերու ներկայացուցիչներուն, տիկնանց եւ կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական կազմերուն, աշակերտութեան, ծնողներուն, բարերարներուն ու բոլոր ներկաներուն, որոնք կը զօրակցին Ազգ. Առաջնորդարանիս ու մասնակից կ'ըլլան նմանօրինակ ձեռնարկներու յաջողութեան: Ան բարձր գնահատեց Ազգ. Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինի պատասխանատու Յայր Միւռնը եւ ատենապետ Տիար Յակոբ Զաղացպանեանը, ծնողական յանձնախումբը եւ հիւրընկալ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներն ու հոգաբարձուները, ինչպէս նաեւ բոլոր եկեղեցիներու հոգաբարձական կազմերը, որոնք ամէն առթիւ նիւթապէս եւ բարոյապէս զօրավիգ կը կանգնին կիրակնօրեայ դպրոցներու ծրագիրներուն եւ աշխատանքներուն:

Ապա Առաջնորդ Սրբազանը վեր առաւ Բարեկենդանի հոգեւոր իմաստը, շեշտելով մարդուն մէջ աստուածային պատկերին անաղարտ պահպանութիւնը, ինչպէս նաեւ յիշեցնելով, թէ *«ազատութիւնը պէտք չէ չարաշահել կամ շփոթել սանձարձակութեան եւ անօրինութեան հետ, որ մարդս մարդկային իր արժանիքներէն կը պարպէ»*: Առաջնորդ Սրբազանը իր խօսքը եզրակացուց ըսելով. *«Բարեկենդանը վերապրեցնելով նախամարդու դրախտային վիճակը՝ մարդուն կը յիշեցնէ իր առաքելութիւնն ու կոչումը, այս աշխարհի վրայ երկրաւոր իր դրախտը ստեղծելու: Վերադարձի ճիգ մը՝ երկնային, դրախտային այն երանական կեանքին, որմէ պատուիրազանցութեամբ արտաքսուեցաւ»*:

Ապա Առաջնորդ Սրբազանը մաղթեց, որ յառաջիկայ շաբաթներուն պահեցողութեան դիմող հաւատացեալներուն ուխտը ընդունելի ըլլայ Աստուծոյ մօտ:

Յետ միջօրէն անցաւ նուագի եւ երգի զուարթ մթնոլորտի մէջ: Նշան Զաղացպանեան ժողովրդային եւ հայրենասիրական ուրախ երգերով խանդավառեց ներկաները:

## **WESTERN PRELACY PAREGENTAN CELEBRATION**

The eve of Great Lent, or Paregentan, is traditionally is a day of joyous celebration when festive gatherings and feasts take place filled with merriment and tradition.

The Prelacy family celebration of Paregentan took place on Sunday, February 14<sup>th</sup>, 2010, under the auspices of and with the presence of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. More than 300 guests attended the celebration, which was organized by the Sunday Schools' Directorate and Parent Committee and held at "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale.

The event began with welcoming remarks by Master of Ceremonies Mrs. Ani Marabian, followed by the collective singing of the Lord's Prayer and the

singing of the Sunday School anthem by Sunday School students. Led by their teachers, the students then performed a series of songs, recitations, and a presentation dedicated to Paregentan.



Directorate head Very Rev. Fr. Muron Aznikian offered remarks on behalf of the committee and invited the Prelate to deliver his message. The Prelate applauded the efforts of the organizing committee in organizing this and similar events throughout the year, as well as the participants for their continuous support of the Prelacy's endeavors and undertakings. He commended Fr. Muron, Chairman Mr. Hagop Tchagaspanian, the parent committee, the Pastors and Board of Trustees of the host church, as well as those of our all churches, for their

constant support and encouragement of our Sunday Schools.

The Prelate also spoke on the spiritual meaning of Paregentan, stressing the importance of keeping God's image pure and holy in ourselves and not abusing the freedoms granted to us. Through the celebration of Paregentan we relive the blissful life of the first man when he was free and reveled in joy in God's presence, which serves as a reminder for us to turn our lives around to that ideal.

The celebration continued with a performance of traditional and popular songs by Nshan Chaghatsbanian.

\*\*\*

## ՏԵԱՌՆՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱԲԱՆԴԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ



Շաբաթ, 13 Փետրուարի երեկոյեան, Տեառնընդառաջի Նախատօնակի արարողութիւն կատարուեցաւ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ Նախատօնակին հանդիսապետեց եւ իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Յայրը:

Տարիներու աւանդութեան համաձայն, Յ.Ս.Ը.Ս.-ի սկաուտական խմբապետական կազմերը ներկայ եղան արարողութեան: Ներկայ էին նաեւ մեր եկեղեցոյ Երիտասարդական խմբակներու անդամ-անդամուհիները:

Նախատեսակի արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ աւանդական խարոյկը վառեցաւ:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը, ներկայ հոգեւորականները, հոգաբարձութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.-ի եւ եկեղեցիներու երիտասարդականի ներկայացուցիչներ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ համախմբուեցան սիրոյ սեղանի շուրջ, հիւրընկալութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան: Խօսք առաւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, արտայայտուելով տօնին խորհուրդին մասին:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանը փոխանցեց իր գրահատական պատգամը:

## **DIVINE LITURGY AND LIGHTING OF THE BONFIRE ON THE FEAST OF THE PRESENTATION OF OUR LORD TO THE TEMPLE**



Saturday, February 13<sup>th</sup>, was the feast of the Presentation of our Lord to the Temple, or Dyarentarach.

The feast was celebrated in all our churches, with the Prelate presiding over services at St. Mary's Church in Glendale.

In keeping with tradition, Homenetmen scouts, scout leaders, and Regional Executive members participated in the ceremony, as well as members of the Prelacy youth groups.

Following the service, the traditional lighting of the bonfire took place in the courtyard.



The Prelate, clergy, Board of Trustees members, Homenetmen scouts, and our churches' youth group members then gathered at "Armenak Der Bedrossian" Hall for a dinner reception together with the Prelate, hosted by the parish Board of Trustees.

During the reception Very Rev. Fr. Barthev Gulumian spoke on the meaning behind the feast.

In conclusion, the Prelate conveyed his blessings and message.

\*\*\*